



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արտյոմ Ազիզյանը, Լարիսա Արտաշեսյանը, Լեվոն Խաչատրյանը, Եղիազար Հարությունյանը, Նարեկ Հարությունյանը, Սարգիս Ղազարյանը, Գոռ Սաֆարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Միհրան Մելքոնյան, Գոռ Մկրտչյան, Էդիկ Բաբախանյան, Արտակ Գալստյան, Պապին Վարդանյան, Սամվել Գարսեվանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոգ Սարիբեկյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ և 65-րդ հոդվածների, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 12-ի արտահերթ նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 83-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Հաղորդում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2023 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ

3. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և հասցեավորման

օբյեկտների անվանման մասին

4.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը փոխանակելու և համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 83-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈՐԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 83-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելվածի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ն/

Լսեցին

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈՐԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի ավագանին՝ որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2023 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԲԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման, հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները, համայնքի ավագանին որոշում է՝

1. Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելված 1-ի:
2. Հասցեավորման օրյեկտները անվանել համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝


1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը փոխանակել համաձայն հավելված 1-ի:
 2. Համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին և վաճառքի գին սահմանել համաձայն հավելված 2-ի:
- Համայնքի ավագանու նաղամներ


Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0


Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05/


Ավագանու անդամներ


ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ 


ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ 


ԳՈՒԿԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 

ՄՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 

ԳԱՐԻԿ ՍԿՐՏՉՅԱՆ 

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ 

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՂՈՎԿՅԱՆ 

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ 

Երևան արձանագրից՝ Մարտի 11-ին Սարիբեկյանը

